



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2024 թվականի № 288-Ա

ԱԼՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Ալվարդ Հովհաննիսյանի*՝ 2024 թվականի հուլիսի 4-ի № 192 դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Պողոտյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Ալվարդ Հովհաննիսյանին* տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2024 թվականի օգոստոսի 5-ից 23-ը ներառյալ:

2. *Ալվարդ Հովհաննիսյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Պողոտյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ *Մարինե Թադևոսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2024 թվականի հուլիսի 11
ք. Հրազդան



ԱՍԱՀԱԿՅԱՆ